Մարակոցը ներքին բերդից 1000 մեթրի չափ բարձր կը լինի, ի վաղուց կարելի էր սանդուխներով բարձրանալ, այժմ այդ ժայռից հանուած սանդուխներն բնութեան ազդեցութեան տակ քայքայուած են, որով անհնարին է վերին բերդը բարձրանալ:

Վերինը ներքնոյն արևելեան հիւսիսն է բարձրացած:

Հանդիպակաց լերան կողերից կերևայ որ մի ընդարձակ տարածութիւն ունի, նման արտաքնոյն ժայռերով շրջապատուած է ետևն, իսկ ջրի կողմն բաց:

Այս տեղ հաստատուած էր հայկական մարտնչող գունդն, որ կը պաշտպաներ Սղնախի [1] մէջ գտնուած ժողովուրդը:

Գիտեմ, սակաւ ծանօթութեամբ չը պիտի կարողանամ հետաքրքիր բանասէրներն զոհացնել, այլ մեր ուղին շարունակենք, թող նոքա փոքրով շատանան:

Բերդի ստորոտէն ուղղուեցանք ջրի ընթացքի հետ, երբեմն այս երբեմն այն ափէն, 3/4 ժամ ճանապարհին վերան մեր ուղին երկուքի բաժանուեցաւ, մին ուղղուեցաւ Ալթուն կեռուկով յարևելս ի Կաղզուան, որ կը տևէ 3 ժամ: Այս ճանապարհի և ջրի միջավայրը կայ Բախր կօլ (պղնձի լիճ) լճակն. որոյ համար կասանդեն թէ շատ խոր է և թէ սորա մէջ թափուած են Սըղնախի (Կապուտայ ներքին բերդը) մէջ գտնուած պաշարեալ հայոց ամեն պղնձեղէն և արծաթեղէն անօթներն, ոսկեղէն անօթներն ևս Ալթուն կեռուկ (ոսկեա կիրճ) հորուած են:

---

1. Ժողովուրդն այժմ ևս Սղնախ կասէ, կը նշանակը թուրք բառով իրարու վրայ խտացած մարդեր: